

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

07.02.2017

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

### ՕՐԱԿԱՐԳ

1. 2016-2017 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքների ամփոփում: /Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/
2. 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին: /Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/
3. 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրում: /Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/
4. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2016-2017 ուստարվա II կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին: /Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/

### ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը: Զեկուցողը ըստ մասնագիտությունների վերլուծեց քննաշրջանի արդյունքները՝ ընդգծելով ձեռքբերումներն ու բացթողումները:

Մասնավորապես նշվեց, որ քննաշրջանն անցկացվել է սահմանված կարգով, ըստ 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի:

Զեկուցողը նշեց, որ 2016-2017 ուսումնական տարվա ձմեռային քննաշրջանին մասնակցել է 332 ուսանող: Միայն գերազանց գնահատականներ ստացել է 38 ուսանող: Գերազանց և լավ՝ 92, միայն բավարար՝ 13, իսկ խառը գնահատականներ է ստացել 164 ուսանող:

Ֆակուլտետի 25 ուսանող քննաշրջանը փակել է ակադեմիական պարտքերով («Պատմություն» մասնագիտությունից՝ 10 ուսանող, «Հոգեբանություն»՝ 3 ուսանող, «Ֆրանսերեն լեզու և գրականություն»՝ 2 ուսանող, «Անգլերեն լեզու և գրականություն»՝ 5 ուսանող, «Հայոց լեզու և գրականություն»՝ 1 և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»՝ 4 ուսանող):

Քննաշրջանի ընթացքում յուրաքանչյուր օրվա արդյունքները հրապարակվում են մասնաճյուղի կայքում և փակցվում ֆակուլտետի հայտարարությունների տախտակին: Վերահսկման այս համակարգի ներդրումը ակնառու դրական է անդրադարձել ուսման առաջադիմության և կրթության որակի վրա:

Ֆակուլտետում առաջին կիսամյակի քննությունների արդյունքում արձանագրված ակադեմիական պատկերը եղել է հետևյալը.

Պատմություն մասնագիտությամբ առաջին կիսամյակի քննություններին մասնակցել է 68 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 85.29%/:

1-ին կուրսում քննություններին մասնակցել է 13 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 92.31%/: 1 ուսանող ստացել է միայն գերազանց, 3 ուսանող՝ գերազանց և լավ, իսկ 8 ուսանող՝ խառը գնահատական: 1 ուսանող ծառայության մեկնելու պատճառով չի ավարտել քննաշրջանը:

2-րդ կուրսում քննություններին մասնակցել է 17 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 100%/: 2 ուսանող ստացել է միայն գերազանց, 7 ուսանող՝ գերազանց և լավ, 5 ուսանող՝ խառը, իսկ 3 ուսանող՝ միայն բավարար գնահատական:

3-րդ կուրսում քննություններին մասնակցել է 21 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 66.67%/: 5 ուսանող ստացել է գերազանց և լավ, 8 ուսանող՝ խառը, 1 ուսանող՝ միայն բավարար գնահատական: 7 ուսանող քննաշրջանի ընթացքում ունեցել է ակադեմիական պարտք: Նրանցից 1-ը ունեցել է երեք և ավելի, իսկ մնացածը՝ մեկ անբավարար գնահատական:

4-րդ կուրսում քննություններին մասնակցել է 17 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 88.24%/: 4 ուսանող ստացել է միայն գերազանց, 4 ուսանող ստացել է գերազանց և լավ, 6 ուսանող՝ խառը, 1 ուսանող՝ միայն բավարար գնահատական: 2 ուսանող քննաշրջանի ընթացքում ունեցել է ակադեմիական պարտք: Նրանցից 1-ը ունեցել է մեկ, իսկ մյուսը՝ երկու անբավարար գնահատական:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ առաջին կիսամյակի քննություններին մասնակցել է 53 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 98,11%/:

1-ին կուրսում քննություններին մասնակցել է 14 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 100%/: 1 ուսանող ստացել է միայն գերազանց, 4

ուսանող՝ գերազանց և լավ, 7 ուսանող՝ խառը, իսկ 2 ուսանող միայն բավարար գնահատական:

2-րդ կուրսում քննություններին մասնակցել է 15 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 93,33%/: 5 ուսանող ստացել է գերազանց և լավ, 9 ուսանող՝ խառը գնահատական: 1 ուսանող քննաշրջանի ընթացքում մեկ առարկայից ունեցել է ակադեմիական պարտք:

3-րդ կուրսում քննություններին մասնակցել է 6 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 100%/: 1 ուսանող ստացել է միայն գերազանց, 2 ուսանող գերազանց և լավ, 3 ուսանող՝ խառը գնահատական:

4-րդ կուրսում քննություններին մասնակցել է 18 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 100%/: 2 ուսանող ստացել է գերազանց և լավ, 12 ուսանող՝ խառը, 3 ուսանող՝ միայն բավարար գնահատական:

Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 1-ին կուրսում քննություններին մասնակցել է 44 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 90,91%/: 8 ուսանող ստացել է գերազանց և լավ, 32 ուսանող՝ խառը գնահատական: 4 ուսանող քննաշրջանի ընթացքում ունեցել է ակադեմիական պարտք: Նրանցից 2-ը ունեցել է մեկ, 1-ի՝ 2, իսկ 1 ուսանող երեք և ավելի անբավարար գնահատական:

Հոգեբանություն մասնագիտությամբ առաջին կիսամյակի քննություններին մասնակցել է 14 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 78,57%/: 3 ուսանող ստացել է գերազանց և լավ, իսկ 8 ուսանող՝ խառը գնահատական: 3 ուսանող ծառայության մեկնելու պատճառով չի ավարտել քննաշրջանը:

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտությամբ առաջին կիսամյակի քննություններին մասնակցել է 29 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 100%/:

3-րդ կուրսում քննություններին մասնակցել է 10 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 100%/: 5 ուսանող ստացել է գերազանց, 4 ուսանող՝ գերազանց և լավ, 1 ուսանող՝ խառը գնահատական:

4-րդ կուրսում քննություններին մասնակցել է 19 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 100%/: 3 ուսանող ստացել է միայն գերազանց, 5 ուսանող ստացել է գերազանց և լավ, 10 ուսանող՝ խառը, 1 ուսանող՝ միայն բավարար գնահատական:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ առաջին կիսամյակի քննություններին մասնակցել է 74 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 93,24%/:

2-րդ կուրսում քննություններին մասնակցել է 27 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 100%/: 5 ուսանող ստացել է միայն գերազանց, 9 ուսանող՝ գերազանց և լավ, 12 ուսանող՝ խառը գնահատական, իսկ 1 ուսանող՝ միայն բավարար գնահատական:

3-րդ կուրսում քննություններին մասնակցել է 18 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 94,44%/: 2 ուսանող ստացել է միայն գերազանց, 5 ուսանող՝ գերազանց և լավ, 9 ուսանող՝ խառը գնահատական, իսկ 1 ուսանող՝ միայն բավարար գնահատական: 1 ուսանող քննաշրջանի ընթացքում ունեցել է երեք և ավելի առարկաների ակադեմիական պարտք:

4-րդ կուրսում քննություններին մասնակցել է 29 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 86,21%/: 7 ուսանող ստացել է միայն գերազանց, 7 ուսանող՝ գերազանց և լավ, իսկ 11 ուսանող՝ խառը գնահատական: Քննաշրջանի ընթացքում 4 ուսանող մեկ առարկայից ունեցել է ակադեմիական պարտք:

Օտար լեզուներ մասնագիտության 1-ին կուրսում քննություններին մասնակցել է 20 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 100%/: 5 ուսանող ստացել է միայն գերազանց, 9 ուսանող՝ գերազանց և լավ, 6 ուսանող՝ խառը գնահատական:

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ առաջին կիսամյակի քննություններին մասնակցել է 30 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 93,33%/:

2-րդ կուրսում քննություններին մասնակցել է 6 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 100%/: 3 ուսանող ստացել է գերազանց և լավ, 3 ուսանող՝ խառը գնահատական:

3-րդ կուրսում քննություններին մասնակցել է 14 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 92,86%/: 5 ուսանող՝ գերազանց և լավ, իսկ 8 ուսանող՝ խառը գնահատական: 1 ուսանող քննաշրջանի ընթացքում մեկ առարկայից ունեցել է ակադեմիական պարտք:

4-րդ կուրսում քննություններին մասնակցել է 10 ուսանող /Բացարձակ առաջադիմությունը կազմել է 90,00%/: 2 ուսանող ստացել է միայն գերազանց, 2

ուսանող՝ գերազանց և լավ, իսկ 5 ուսանող՝ խառը գնահատական: 1 ուսանող քննաշրջանի ընթացքում մեկ առարկայից ունեցել է ակադեմիական պարտք:

2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքներով ֆակուլտետի բացարձակ առաջադիմությունը կազմել է 92,47%:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, բ.գ.թ. Ք. Հարությունյանը, բ.գ.թ. Ա. Մարհատյանը, ասիս. Ա. Մարդանյանը:

### ***ՈՐՈՇԵՑԻՆ.***

*- Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ընթացքը համարել բավարար:*

### ***ԼՄԵՑԻՆ.***

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը: Զեկուցողը հանգամանալի ներկայացրեց 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը: Առաջին հերթին նա ներկայացրեց ֆակուլտետի դասախոսների 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական բեռնվածությունները: Անդրադարձավ իրականացված վերանայումներին, որոնց հետևանքով մի շարք դասախոսների առարկայական բաշխվածություններում և դրույքաչափերում տեղի են ունեցել փոփոխություններ:

Դեկանը նշեց, որ արդեն սկսվել են 2-րդ կիսամյակի ուսումնական պարապմունքները: Պատրաստ են ձևեռային քննաշրջանի 1-ին լուծարքային շրջանի գրաֆիկները, երկրորդ կիսամյակի դասատախտակները: Զեկուցողը նշեց, որ մի շարք կուրսեր հունվարի 30-ից փետրվարի 25-ը ընկած ժամանակահատվածում դպրոցներում կանցկացնեն ուսումնական պլանով նախատեսված մանկավարժական պրակտիկա: Այդ կուրսերը եռօրյա ժամկետում պասիվ պրակտիկա են անցկացրել մասնաճյուղում, որից հետո դեկավարների հսկողությամբ ակտիվ պրակտիկա են անցկացնում համապատասխան հաստատություններում:

### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

*Պ.գ.թ. Ս. Առաքելյանը, մ.գ.թ. Վ. Բրուտյանը, բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, մ.գ.թ. Լ. Հարությունյանը, Զ. Վարտանյանը, Ռ. Հարությունյանը:*

Մասնաճյուղի տնօրեն Ս.Առաքելյանը՝ անդրադառնալով ուսումնական գործընթացի շարունակական բարելավմանը ուղղված մի շարք խնդիրների, ընդգծեց, որ անհրաժեշտություն կա ևս մեկ անգամ ամբիոններում քննարկել առարկաների ուսումնական փաթեթները, ընթացիկ և եզրափակիչ քննությունների հարցաշարերը: Տնօրենը կարևորեց նաև դասախոսների վերապատրաստման ծրագրերը և ուսանողների հետ տարվող բարոյահոգեբանական աշխատանքները:

### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

*2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:*

### **ԼՄԵՑԻՆ.**

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը: Զեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի, որոնք են՝ անառարկելի ակադեմիական բարձր առաջադիմությունը, պատշաճ կարգապահությունը և հասարակական ակտիվությունը: Ա. Ներսիսյանը փաստեց, որ ֆակուլտետում նվազում է անընդմեջ ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողների թիվը, որը խոչընդոտ է հանդիսանում նրանց անվանական կրթաթոշակի ներկայացնելուն: Այդուհանդերձ, նման ուսանողներ կան և պետք է խրախուսել նրանց:

### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու Ա. Սարհատյանը «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողներից առանձնացրեց 3-րդ կուրսի ավագ Մերի Սարգսյանի թեկնածությունը: Զեկուցողը նշեց, որ վերջինս հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի:

Բացի այդ՝ Մ. Սարգսյանը ոչ միայն ցուցաբերում է գերազանց առաջադիմություն, հասարակական ակտիվություն և օրինակելի վարք, այլ նաև ակտիվորեն մասնակցում է մասնաճյուղում և հանրապետությունում կազմակերպվող մի շարք գիտական նստաշրջանների: Զեկուցողը առաջարկեց Մերի Սարգսյանին ներկայացնել որպես «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողների շրջանում առաջադիմությամբ և ուսանողական հասարակական աշխատանքներում ներգրավվածությամբ աչքի է ընկել 3-րդ կուրսի ուսանող Մինավարդ Մելիքբեկյանը: Նա վերջին երեք կիսամյակում անընդմեջ գերազանց առաջադիմություն է ունեցել: Ա. Ներսիսյանը առաջարկեց Մինավարդ Մելիքբեկյանին ներկայացնել որպես «Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու Ա. Միմոնյանը ներկայացրեց, որ տվյալ մասնագիտության ուսանողներից առաջադիմությամբ աչքի են ընկել 3-րդ կուրսի ուսանողներ Ռաֆայել Հարությունյանը և Հայկ Դանիելյանը: Նրանք վերջին երեք կիսամյակում ունեն անընդմեջ գերազանց առաջադիմություն: Զեկուցողն Ռաֆայել Հարությունյանին առաջարկեց որպես «Շառլ Ազնավուրի» անվան կրթաթոշակի թեկնածու, իսկ Հայկ Դանիելյանին՝ «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

### ***ՈՐՈՇԵՑԻՆ.***

Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատել Հայկ Դանիելյանին որպես «Վազգեն Սարգսյան», Մինավարդ Մելիքբեկյանին՝ «Դավիթ Անհաղթ», Մերի Սարգսյանին՝ «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ» և Ռաֆայել Հարությունյանին՝ «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակի:

### ***ԼՄԵՑԻՆ.***

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով աշխատանքային պլանում կատարվել են որոշակի

փոփոխություններ: Այս փոփոխությունները թույլ են տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել ճկուն և արդյունավետ: Դեկանը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուսյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

***ՈՐՈՇԵՑԻՆ.***

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. Ներսիսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վ. Աղաբաբյան